Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ-ի

EduArmenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպե՞ս սովորեցնել աշակերտներին կարևորել գիտելիքը և կարողունակությունը և ոչ թե գնահատականը

Հետազոտող ուսուցիչ՝ Արաքսյա Թադևոսյան
Հրազդանի թիվ 11 հիմն.դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

1. Գիտելիքի և կարողությունների կարևորման խնդիրը՝ գնահատման համակարգի փոփոխությունների համատեքստում.....5

2. Սովորողների շրջանում գիտելիքի և կարողությունների՝ գնահատականից կարևորման հիմնահարցերը, ուղիներն ու միջոցները.....11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից աշխարհում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում արագ ընթացող փոփոխություններն իրենց ազդեցությունն են ունենում նաև կրթական համակարգի վրա: Հասարակության արմատական փոփոխություններն առավել կարևոր են դարձնում կրթության բարձր որակի ապահովման պահանջը, որի հիմքերից մեկն էլ սովորողների շրջանում գիտելիքների և կարողությունների կարևորումն է գնահատականից: Կրթական համակարգի բարեփոխումներին մշտապես զուգահեռվող խնդիր է կրթական հաստատություններում սովորողի գիտելիքների գնահատման հարափոփոխ, ոչ միասնական և կրթական մշտապես նորացվող չափորոշիչներով համակարգի ստեղծումը:

Կրթական համակարգի բարելավման և այն միջազգայինին համապատասխանեցնելու գործընթացում տարիներ շարունակ կատարվում են գնահատման համակարգերի փոփոխության տարաբնույթ գործընթացներ: Դրանցից սովորողների շրջանում գիտելիքի և կարողությունների կարևորման խնդրի լուծման առումով հատկանշական է վերջերս ընդունված Հանրակրթության պետական նոր չափորոշիչները

Գործող Հանրակրթության պետական չափորոշչի փոխարեն առաջարկվող չափորոշչի նախագիծը նպատակ ունի լուծելու նաև գնահատման համակարգի մի շարք խնդիրներ, այդ թվում՝ սովորողների շրջանում գիտելիքի և կարողությունների կարևորման խնդիրը, որի համար առաջարկվում է միավորային գնահատում իրականացնել սկսած 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից՝ էապես կարևորելով ուսուցանող (ձևավորող) գնահատումը:

Նախագծի համաձայն՝ տարրական դպրոցում ամփոփիչ գնահատումը կիրականացվի սովորողի ուսումնական ձեռքբերումների բնութագրման միջոցով:

Հաշվի առնելով մինչ այսօր և ներկայումս էլ հանրակրթության բնագավառում կատարվող փոփոխությունները, այդ թվում՝ գնահատման համակարգի արդի խնդիրներից լուծմանն ուղղված միջոցառումները, կարելի է հիմնավորել սույն աշխատանքում քննվող թեմայի կարևորությունը: Սովորողների շրջանում գիտելիքի և կարողությունների կարևորման խնդիրն առավել արդիական է դարձրել շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները կարողունակությունների հիման վրա կառուցելու, նախագծում կրթության բովանդակության ձևավորման հիմքում կարողունակությունների վրա հիմնված մոտեցում ներդնելու և գիտելիքահենք կրթություն ապահովելու հրամայականը:

Երբ աշակերտները սովորում են տարրական դպրոցում, որտեղ ունեն իրենց համար հոգեհարազատ մեկ անձ՝ ով ուսուցիչ է, մայր և ընկեր, ով նաև իրենց գնահատողն է, վաստակած գնահատականի մեջ խնդիր չեն տեսնում: Սակայն խնդիրն ի հայտ է գալիս միջին դպրոցում, երբ առնչվում են տարբեր ուսուցիչների հետ, ովքեր ունեն տարբեր պահանջներ,գնահատման տարբեր մոտեցումներ: Սովորողները հայտնվում են դժվարին հոգևիճակում: Սկսում են կարևորել գնահատականը և ոչ թե գիտելիքն ու կարողունակությունը:Այս երևույթը ինձ որպես դասղեկ և որպես դասավանդող ուսուցիչ խանգարում է ռեալ գնահատել, որի արդյունքում տուժում է գիտելիքը:

Վարկած:

Կան այնպիսի ուղիներ և միջոցներ, որոնց շնորհիվ կարելի է աշակերտներին սովորեցնել կարևորել գիտելիքը և կարողունակությունը:

Աշխատանքի նպատակը:

Աշխատանքը նպատակաուղղված է սովորողների շրջանում գիտելիքի և կարողությունների՝ գնահատականից կարևորման հիմնահարցի ուսումնասիրությանը:

Աշխատանքի խնդիրները: Ելնելով աշխատանքի նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ տեսա-մեթոդական գրականություն:
2. Պարզել գիտելիքի և կարողության կարևորման խնդիրը՝ գնահատման համակարգի փոփոխությունների համատեքստում:
3. Վերհանել սովորողների շրջանում գիտելիքի ու կարողունակությունների կարևորությունը:

1. **Գիտելիքի և կարողությունների կարևորման խնդիրը՝ գնահատման համակարգի փոփոխությունների համատեքստում**

Ուսումնական գործընթացը կարելի է բաժանել երկու մասի՝ սովորողների գիտելիքների հաղորդում և դրանց գնահատում: Յուրաքանչյուր կրթական համակարգի, այդ թվում՝ դպրոցների համար սովորողների գիտելիքների ստուգումն ու գնահատումը գլխավոր և դժվարին խդիրներից է, դրա արդյունավետ և օբյեկտիվ իրականացման հնարավորությունների ավելացումից է կախված նաև կրթության որակի պահպանման ու բարձրացման խնդրի արդյունավետ լուծումը:

Վերջին տասնամյակում նկատվում է գիտելիքների հաղորդման ու գնահատման գործընթացի կազմակերպման միջոցների ու գործիքների ինտենսիվ զարգացում և կրթական գործընթացում գիտելիքների գնահատման ավելի օբյեկտիվ մեթոդների ու գործիքների անընդհատ որոնում՝ պայմանավորված ինչպես գիտատեխնիկական զարգացմամբ, այնպես էլ կրթության որակի բարելավման, կրթության բովանդակությունը կարողունակությունների վրա հիմնված մոտեցմամբ ձևավորելու, գնահատման համակարգի խնդիրները լուծելու լավագույն ուղիներ մշակելու և ներդնելու արդի պահանջներով:

Կարողունակությունների վրա հիմնված կրթության ապահովման համար կրթական գործընթացում գիտելիքի և կարողությունների կարևորումը ներկայումս առաջնահերթություն է, քանի որ գնահատման համակարգի չափորոշչային

վերջին փոփոխությունները թույլ են տալիս վերանայել գիտելիքների վերահսկողությունը:

Ոչ թե հանուն գնահատականի, այլ հանուն գիտելիքի սովորելու պահանջն արտահայտվեց, երբ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն առաջարկեց վերանայել 2010 թվականին ընդունված կրթության չափորոշիչների վերաբերյալ որոշումը: Հանրակրթական դպրոցների առջև խնդիր դրվեց հրաժարվել մինչև 5-րդ դասարանների աշակերտներին գնահատելուց, իսկ միջին և ավագ դասարանների համար առաջարկվեց բացառել անբավարար գնահատականները: Հաշվի առնելով կրթության բովանդակության փոփոխման, գնահատման համակարգի խնդիրների լուծման և հանրակրթության մի շարք այլ խնդիրների լուծման անհրաժեշտությունը՝ մշակվեց չափորոշիչների նոր Նախագիծ, որի հեղինակները կարծում են, որ տասնամյակներ շարունակ գործող համակարգով աշակերտը ձգտում է լավ հիշել սովորածը՝ գնահատական ստանալու համար, իսկ ուսուցիչը դասավանդում է այնպես, որ աշակերտները ստացած գիտելիքը հիշեն մինչև թեմատիկ գրավոր աշխատանքը կամ քննությունը: Սրա փոխարեն ԿԳՄՍ նախարարությունն առաջարկեց ներդնել կարողությունների վրա հիմնված համակարգ,. այսինքն՝ սահմանել շրջանավարտի ակնկալվող վերջնարդյունքը:

Փոփոխությունների Նախագիծը, իհարկե, ինչպես և ցանկացած նորամուծություն, բուռն քննարկումների առիթ դարձավ: Կարողությունների վրա հիմնված կրթական համակարգն արդեն իսկ օգտագործվում է աշխարհի շատ երկրներում և համարվում է լավագույն փորձը: Սակայն կարիք կա հստակեցնելու, թե ինչպես են այս փոփոխություններն իրականացվելու: Նախագծով առաջարկվող փոփոխությունները կարծում ենք կարող են դրականորեն նպաստել նրան, որ աշակերտները սովորեն ոչ թե պատժող գործիքներով, այլ խթանող[1]:

Չափորոշչային վերջին փոփոխությամբ տարրական դպրոցում միավորային գնահատումից հրաժարումն, ըստ էության, պայմանավորված է ինչպես սովորողի գիտելիքների օբյեկտիվ մակարդակը արտացոլող գնահատման անհրաժեշտությամբ, այնպես էլ ուղղվում է սովորողների շրջանում գնահատականից գիտելիքի և կարողությունների կարևորմանը:

[1] Սովորել ոչ թե հանուն գնահատականի, այլ՝ գիտելիքի. ի՞նչ փոփոխություններ են առաջարկվում կրթության չափորոշիչներում, https://factor.am/264954.html © factor.am

Նշված փոփոխությունները հիմնավորվում են նաև այն հանգամանքով, որ գնահատման համակարգը կառուցվածքային տեսանկյունից մասնատված է տարբեր փաստաթղթերում: Ուսուցիչներն ընթացիկ և ամփոփիչ գնահատումն իրականացնում են՝ հիմնականում հիմնվելով գնահատման ուղեցույցների վրա և առաջնորդվում կոնկրետ տարվա ցուցումներով: Վերջիններս ուղղորդիչ բնույթ ունեն և հարուստ են պատրաստվածության ստուգման տեսակների օրինակներով: Համակարգային մասնատվածությունը հնարավորություն չի ընձեռում հստակ կապ ստեղծել գնահատման համակարգի և չափորոշչային պահանջների միջև: Թե՛ գնահատման համակարգի և թե՛ չափորոշչային պահանջների մասնատված ներկայացումը բերում է տարընթերցման և տարըմբռնման:

Չափորոշչում գնահատման նկարագրությամբ սովորողներին ներկայացվող պահանջները հիմնականում իմացական գիտելիքի բնույթի են, և առկա է կիրառական հմտությունների և կարողությունների շեշտադրումների պակաս:

Բացի այդ, գործող գնահատման համակարգում շեշտադրվում է դրանում պատժի բաղադրիչը՝ հիմնված միավորային գնահատման վրա: Տարբեր ուսումնասիրություններ ցույց են տալիս արդի պայմաններում միավորային գնահատման ոչ բավարար լինելը՝ սովորելու արդյունավետ միջավայր ապահովելու տեսանկյունից և դրան ի համեմատ ուսուցանող և ձևավորող գնահատման բաղադրիչի շեշտադրման անհրաժեշտությունը[2]:

Կարելի է ենթադրել, որ գիտելիքը իմացական մակարդակից կիրառական հմտությունների և կարողությունների մակարդակ փոխադրելը կարող է դառնալ սովորոսների շրջանում գիտելիքի և կարողությունների կարևորման լավագույն միջոցներից: Այս դեպքում՝ սովորողը գիտելիքն ընկալում է ոչ թե զուտ որպես որոշակի տեղեկատվության իմացություն, այլ այդ տեղեկատվության օգտագործում, գործնականում դրա կիրառում և հանգեցնում սովորողի կողմից այդ գիտելիքն ունենալու, այն սեփական փորձով կարողությունների վերածելու արդյունավետությունը գիտակցելուն:

[2] Դպրոցներում գնահատման համակարգը և առարկաների ընտրության կարգը փոխվում է. կառավարությունը որոշում ընդունեց, https://iravaban.net/316552.html

Մյուս կողմից՝ Նախագծում առաջարկվում է սովորողների միավորային գնահատումն իրականացնել սկսած 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից՝ էապես կարևորելով ուսուցանող (ձևավորող) գնահատումը: Նախագծի համաձայն՝ տարրական դպրոցում ամփոփիչ գնահատումը կիրականացվի սովորողի ուսումնական ձեռքբերումների բնութագրման միջոցով: Ըստ էության, նման մոտեցումը վերափոխում է ինչպես ուսուցիչների, այնպես էլ սովորողների շրջանում գնահատականի մասին պատկերացումները՝ իբրև գիտելիքի չափման միավորի, որը, կարծում ենք, նույնպես սովորողների շրջանում գնահատականից գիտելիքն ու կարողությունները վեր դասելու կարևոր նախապայման է:

Ինչ վերաբերում է քանակական գնահատման դեպքում միավորային սանդղակի կիրառմանը, ապա, չնայած այդ առնչությամբ տարբեր քննադատական կարծիքներին, չափորոշիչը մշակողների կողմից կարևոր փոփոխություն է դիտվում բացասական կամ անբավարար միավորային շեմից հրաժարվելը՝ գիտելիքը արժևորելու տեսակետից: Այս քայլի արդյունքում նախատեսվում է ունենալ առավել արդարացի գնահատում՝ հատկապես հաշվի առնելով հանրակրթության ներառականությունը, կվերացնի երկտարեցիության երևույթը, որն իրականում նպաստում է սովորողների առանձին խմբի պիտակավորմանը և սոցիալական մեկուսացմանը, այլ ոչ թե աջակցում նրանց խնդիրների կարգավորմանը[3]:

Միևնույն ժամանակ, նախատեսվում է չափորոշչով հստակ սահմանել գնահատման սկզբունքները, նպատակները և չափանիշները, իսկ գնահատման գործիքակազմը սահմանել առանձին միասնական կարգով: Նախագծի մշակման ընթացքում ուսումնասիրվել է մի շարք երկրների փորձը հանրակրթական չափորոշիչների վերաբերյալ:

Գնահատման նոր համակարգի հիմքում նոր չափորոշչով դրվել են երկու առանցքային «նորամուծություններ»՝

ա) 1-ինից մինչև 5-րդ դասարանի 1-ին կիսամյակը ներառյալ հանվում է թվային գնահատման սկզբունքը: Գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով (կետ 41):

[3] Դպրոցներում գնահատման համակարգը և առարկաների ընտրության կարգը փոխվում է. կառավարությունը որոշում ընդունեց, https://iravaban.net/316552.html

բ) Թվային գնահատման սանդղակի կիրառման դեպքում էլ «որևէ թիվ չի հանդիսանում անբավարար գնահատական, և յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ» (կետ 36):

Իհարկե, այս փոփոխությունները միանշանակ չընդունվեցին: Ձևավորվեցին տարակարծություններ: Մասնավորապես՝ կա տեսակետ, որ ցածր դասարաններում, երբ դեռ դպրոցական կրթական համակարգին փոքրերի ադապտացվելու գործընթացներ են ընթանում, և դեռ նոր են ձևավորվում նրանց գիտելիքները թվերի մասին, գնահատման անվանական-բնութագրական եղանակը կիրառելն արդարացված է մի շարք առումներով: Սակայն երբ սովորողն արդեն որոշակի պատկերացումներ ունի թվերի, թվաբանական գործողությունների մասին, գնահատման թվային եղանակը չկիրառելը և միայն բնութագրականով սահմանափակվելը ճիշտ չէ: Իբրև ասվածի լուծում՝ առաջարկվում է՝ թվային-միջակայքային գնահատման համակարգը ներմուծել աշակերտների թվաբանական գիտելիքների ձևավորմանը զուգնթաց, երբ նրանք արդեն իսկ ունեն թվերի բաղդատման և դրանց հետ որոշակի գործողություններ կատարելու հմտություններ[4]:

Սովորողների շրջնում դեռևս տարրական դասարաններից գնահատականը գիտելիքից ու կարողություններից կարևոր համարելու խնդրի լուծման առումով, կարծում ենք, գնահատման անվանական-բնութագրական եղանակը կարող է արդյունավետ կիրառվել, քանի որ ուսումնառության դեռևս սկզբից սովորողների մեջ կձևավորվի գիտելիքի ձեռբերման, այն կարողությունների վերածելու կարևորության գիտակցումը, և գիտելիքը միավորային ցուցանիշով արտացոլելու փոխարեն, նրանց համար կարևոր կդառնա այն գործնականում կիրառելու հաջողություններով արտացոլելը: Այսինքն՝ գիտելիքի գնահատականը կլինի, բայց ոչ միավորային, թվային նիշով, այլ դրա բնութագրմամբ: Իսկ գիտելիքի բնութագրումով գնահատումը կփոխի սովորողների վերաբերմունքը գնահատականի համար սովորելու կարծրատիպը:

---

4 Հովհաննիսյան Հ., Խնդիրներ գիտելիքների գնահատման համակարգում https://www.hamakarg.am/?p=5436

Ենթադրվում է, որ չափորոշչի ընդունմամբ գնահատման քանակական (միավորային) և որակական (ուսուցանող) եղանակների մեջ որակական գնահատման տեսակարար կշիռը զգալի կմեծանա՝ նպաստելով սովորողների հաջողությունների և բարելավման ուղղությունների որակյալ նկարագրությանը: Կարելի է փաստել, որ գնահատման քանակական (միավորային) և որակական (ուսուցանող) եղանակների մեջ որակական գնահատման առանցքային դերն էապես կնպաստի սվորողների շրջանում գնահատականից գիտելիքի և կարողությունների կարևորման խնդրի կարգավորմանը: Սովորողների շրջանում կձևավորվի գնահատականի ըմբռնման այլ բովանդակություն, երբ գնահատվում է գիտելիքը ոչ թե զուտ գիտելիքի քանակը չափելու, այլ այն կիրառելու կարողությունները գնահատելու համար:

Գիտելիքը և կարողությունները գնահատականից կարևորելու առումով մեկ այլ հարց է «10 միավորային սանդղակում որևէ թիվ չի հանդիսանում անբավարար գնահատական և յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ» (կետ 36) ձևակերպումը: Թեև այն շարունակում է մնալ վիճահարույց ուսուցիչների ու հանրակրթության բնագավառի այլ մասնագետների շրջանում, այդուհանդերձ՝ կարծում ենք եթե այն որոշակիորեն վերախմբագրվի, վերամշակվի, ապա կարող է դառնալ սովորողների շրջանում գիտելիքի և կարողությունների կարևորման խնդրի լուծման ուղիներից մեկը: Այս դեպքում՝ սովորողի գիտակցության մեջ կարող է ձևավորվել գիտելիք ունենալու պարտադիր պահանջը՝ անկախ դրա թվանշային արտահայտությամբ ավել կամ պակաս, շատ կամ քիչ որակվելուց:

Իբրև նշված խնդրի լուծման ուղի առաջարկվում է՝ գիտելիքների և կարողությունների գնահատման անվանական-բնութագրական սկզբունքը որպես հիմնական կիրառել հանրակրթական դպրոցի 1-ին դասարանում և 2-րդ դասարանի 1-ին կիսամյակում: Դրանից հետո այն համադրել քանակական գնահատման հետ՝ քանակական ու որակական գնահատման ճիշտ հարաբերակցության տարորոշմամբ: Այսինքն՝ քանակական գնահատման անցումը պետք է ընթանա որակական գնահատման տեսակարար կշռի աստիճանական ավելացմանը զուգընթաց: Նման մոտեցումով բառային-բնութագրական սկզբունքը կպահպանվի՝ իբրև գնահատականից գիտելիքի ու կարողությունների կարևորման պայման և կարող է հանրակրթության տարբեր

աստիճաններում ու մակարդակներում կիրառվել կա՛մ քանակական գնահատականի հետ միաժամանակ, կա՛մ որպես օժանդակ միջոց:

Օրինակ երբ ես դասավանդում էի 5-րդ դասարանում՝ առնչվոցի սովորողների հետ, ում 4-րդ դասարանը ավարտելիս դասվարը, բնութագրել էր նշելով, որ նա ամբողջ տարվա ընթացքում շատ լավ է աշխատել, եղել է պարտաճանաչ, պատրաստակամորեն կատարել է բոլոր հանձնարարությունները, սակայն վերջնական ստուգման արդյունքում գրանցել է ոչ ցանկալի արդյունքներ, երևի հուզմունքն է խանգարել: Այս դեպքում սովորողը կարևորում էր գիտելիքը և ոչ թե գնահատականը:

Մեկ այլ սովորողի դասվարը բնութագրել էր, նշելով, որ նա տարվա ընթացքում հաճախ է բացակայել, ժամանակ առ ժամանակ թերացել է առաջադրանքները կատարելիս, սակայն վերջնական ստուգման արդյունքում գրանցել է ցանկալի արդյունքներ: Այս պարագայում սովորողը 5-րդ դասարանում կարևորում էր գնահատականը, որ թե գիտելիքը և կարողունակությունը:

2. Սովորողների շրջանում գիտելիքի և կարողությունների՝ գնահատականից կարևորման հիմնահարցերը, ուղիներն ու միջոցները

Սովորողների շրջանում գիտելիքի և կարողությունների՝ գնահատականից կարևորման հիմնահարցերը վերջին շրջանում առավել քննարկվող հարցերից մեկն է: Սա հատկապես արտահայտվում է կրթության բովանդակության փոփոխությունների պայմաններում, երբ կրթության բովանդակության ձևավորման հիմքում առաջարկվում է ներդնել կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը, երբ պահանջ է դրված՝ վերանայել սովորողներին ներկայացվող որակական պահանջները և դրանք կառուցել

կարողունակությունների հիման վրա, գիտելիքի և կարողությունների կարևորումը նոր շեշտադրում է ստացել: Ընդ որում՝ կարևորվում են ոչ թե այն գիտելիքներն ու կարողությունները, որոնք պետք է սովորողը ձեռք բերի առանձին առարկաների ուսումնասիրության արդյունքում, այլ այն հիմնական, առանցքային կարողունակությունները (գիտելիք, հմտություն, վերաբերմունք, արժեքային համակարգ), որոնց պետք է տիրապետի սովորողը իր կրթական խնդիրները լուծելու, արդի աշխարհում արդյունավետ գործելու համար: Ըստ էության, գիտելիքի, հմտության, վերաբերմունքի և արժեքային համակարգի կարևորումը սովորողների շրջանում նույնպես պետք է վեր լինի գնահատականից: Այսինքն՝ յուրաքանչյուր սովորոի մեջ պետք է ձևավորվի գիտելիքի, հմտության՝ գնատականից վեր դասելու գիտակցումը, իսկ դրան կարելի է հասնել, երբ երեխան սեփական փորձով՝ ձեռք բերած գիտելիքի և հմտության, արժեքային համակարգի գործադրմամբ պարզի դրանց կարևորությունը: Ըստ էության, ուսումնական գործընթացը պետք է դրվի գիտակցական հիմքերի վրա, սովորողը պետք է հստակ իմանա, թե ինչ է սովորելու, ի՞նչ նպատակով, թե ստացվող տեղեկատվությունն ինչով կարող է օգտակար լինել կյանքում և այլն:

Ընդհանուր առմամբ, սովորողների շրջանում գիտելիքի և կարողությունների կարևորումը գնահատականից հնարավոր է գնահատման համակարգի համար էական այն սկզբունքների կիրառմամբ, որոնցից հատկանշական են համակարգի թափանցիկությունը, օպերացիոն արդարությունը[5], տվյալների տարաժամանակյա և համընդհանուր վավերականությունը, *գնահատման ստուգիչ և խրախուսող դերակատարումը*, կրթական համակարգի՝ զարգացմանն ուղղված լինելը, յուրացումը գնահատմամբ չպայմանավորելը[6], կրթության շարունակականության ապահովումը, գնահատման համակարգի ամբողջականությունն ու սահուն գործարկումը և այլն:

[5] Սա լայն հասկացություն է, որը ենթադրում է սովորողի աշխատանքի լիարժեք գնահատում ոչ բինար մեթոդներով (մասնավորապես, նույնիսկ եթե լուծման արդյունքը սխալ է, բայց քայլերը ճիշտ՝ սովորողը պետք է գնահատվի), գնահատման սուբյեկտիվիզմի հնարավորինս նվազեցում, գնահատման համակարգի՝ բոլոր սովորողների պարագայում իրավահավասար գործարկում, տարբեր աղբյուրների միջոցով գնահատում և այլն:

[6] Սա ենթադրում է յուրացվող բովանդակության մշակում, որի հիմքով մշակվում է գնահատումը և ոչ հակառակ գործընթացը:

Այս սկզբունքների մեծ մասն արտացոլված է նաև հանրակրթության պետական կրթակարգում[7]:

Ըստ էության, շեշտադրվում է սովորողի գիտելիքի գնահատում դրա յուրացման տարբեր աստիճաններում, օրինակ՝ նույնիսկ եթե գիտելիքի ձեռք բերման արդյունքը լիարժեք չի համապատասխանում կրթության բովանդակության պահանջներին, բայց դրան հասնելու նշանակալի քայլեր նկատելի են, ապա սովորողը պետք է գնահատվի յուրաքանչյուր ձեռքբերման համար: Սա կնպաստի գիտելիքի կարևորմանը:

Վերոնշյալ սկզբունքներին բավարարող ընթացիկ գնահատումներն արվում են հնարավորինս «սովորողակենտրոն» և «ապահով» միջավայրի պայմաններում: Սա խթանում է սովորողների կողմից գնահատումը որպես զարգացման գործիք և ոչ որպես «մամլիչ» դիտելը[8]: Երբ գնահատականն արդեն դիտվում է որպես զարգացման գործիք, ոչ թե որպես գիտելիքոի չափման միջոց, ապա գիտելիքի կարևորությունն ու արժևորումը այլևս չի պայմանավորվում գնահատվելու սպասման գործոնով, հետևաբար՝ գնահատականի համար սովորելը փոխարինվում է գիտելիքի արժևորմամբ: Կարծում ենք՝ յուրաքանչյուր ուսուցչի խնդիրը պետք է լինի *գնահատման ստուգիչ և խրախուսող դերակատարման* ճիշտ հարաբերակցության ձևավորումը, որին կարելի է հասնել սովորողների նույնիսկ ամենափոքր առաջընթացը, հաջողությունը խրախուսելու, կրթական տարաբնույթ գործիքների օգտագործմամբ գիտելիքը արժևորելու և այլ ուղիներով: Այսինքն՝ որքան էլ գնահատականն ընկավում է գիտելիքի չափման ու ստուգման միջոց, այդուհանդերձ՝ պետք է հասնել նրան, որ սովորողները այն չկարևորեն գիտելիքից, գիտելիքի ստացումը չպայմանավորվի գնահատականով, այլ գնահատականը ըմբռնվի որպես խրախուսանք՝ սովորողի յուրաքանչյուր առաջընթացի համար՝ հետագայում այն առավելագույնի հասցնելու միտումով:

Ընթացիկ գնահատման ներկա տարածված մոդելներն են՝ «յուրացմանն ուղղված գնահատումը» (Assessment for Learning) և «յուրացման գնահատումը» (Assessment of Learning): «Յուրացմանն ուղղված գնահատումը» վերաձևակերպում է ուսուցչի դերը որպես խորհրդատու: Երկու մոդելներն էլ

[7] Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում, էջ 19, http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf
[8] Տե՛ս նույն տեղում:

կրթության ոլորտում հաջողությամբ փորձարկում են առաջատար երկրները, ինչպիսիք են Ֆինլանդիան, Անգլիան, Իռլանդիան, Սինգապուրը:

Գնահատումը պետք է ուղղված լինի ոչ միայն յուրացված բովանդակության, այլև հմտությունների և կարողությունների ստուգմանը և ձևավորմանը: Այս պարագայում միայն գնահատումը կլինի ամբողջական և ներկայացուցչական[9]:

Այսպիսով, պետք է հասնել նրան, որ սովորողները գիտելիքն ու կարողությունները արժևորեն ոչ թե որպես գնահատման կարևոր նախապայման, սովորեն հանուն գնահատականի, այլ հանուն գիտելիքի: Իսկ գիտելիքն ու կարողությունները աշակերտների շրջանում կարժևորվեն, երբ գնահատականը ընկալվի ոչ թե որպես պատժող, այլ խթանող գործիք: Հետևաբար՝ պետք է մշակել գնահատման այնպիսի խթանիչ գործիքակազմ, որով հնարավոր կլինի նպաստել գնահատականի խթանող և խրախուսող դերի բարձրացմանը սովորողների շրջանում:

Գնահատման գիտելիքահենք և կարողունակությունների կարևորմանն ու արժևորմանն ուղղված կրթական այլ արդյունավետ խթանիչ գործիքակազմի մշակման հարցում, կարծում ենք, օգտակար կարող են լինել ուսուցիչների շրջանում հարցումները, հարցման արդյունքների վերլուծությունը և քննարկումը, ծնողների հետ զրույցը, մանկավարժների միջև փորձի փոխանակումը, ինչպես նաև՝ միջազգային առաջավոր ու հաջողված փորձի ուսումնասիրումը և ներդրումը:

Իհարկե, ցանկացած նորամուծություն կարիք ունի փորձարկման, որից հետո միայն հնարավոր կլինի պարզել դրա արդյունավետությունը տվյալ խնդրի լուծման հարցում:

Սովորողների շրջանում գիտելիքի արժևորման հարցում բացի զուտ գնահատումից գնահատման տարբեր մեթոդները պետք է օժտել նաև ուսուցողական արժեքով՝ նպաստելով նաև սովորողների գօտելիքների մակարդակի բարելավմանը: Այսինքն՝ գնահատումը դառնում է ոչ միայն գիտելիքի ստուգման, այլև դրա հիման վրա՝ նոր գիտելիք ձեռք բերելու լավագույն

[9] Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում, էջ 19, http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf

միջոց: Այսպիսի հնարավորություն ընձեռում են, օրինակ, թեստային առաջադրանքները, թեստավորմամբ գնահատումը: Այդ նպատակով՝ կիրառելի են թեստային գնահատման հետևյալ ռազմավարությունները[10]՝

1. Հետադարձ կապի ապահովում՝ մեկնաբանելով սովորողների պատասխանները և տալով անհրաժեշտ ցուցումներ: Օրինակ՝ տրվող հարցերին ավելացնել համապատասխան դասերի (մոդուլներ, դասագրքի գլուխներ) հղումներ: Եթե պատասխանը սխալ է, կարելի է տալ բացատրություն, թե ինչու է սխալ:
2. Թեստի յուրաքանչյուր հարցին պատասխանելու մի քանի փորձեր տրամադրելը, որը հնարավորություն կտա սաներին սովորել իրենց սխալներից, ըմբռնել հարցը կամ առաջադրանքը: Այս մոտեցումը նպաստում է գիտելիքների ավելի լավ, ավելի ամբողջական յուրացմանը: Կարելի է սովորողներին առաջադրանքի հարցերին պատասխանելու անսահմանափակ թվով փորձերի հնարավորություն տալ, բայց այն հաղթահարած համարել միայն 100% արդյունքի հասնելու դեպքում: Եվ միայն դրանից հետո անցնել հաջորդ թեմային:

Համակարգչային թեստերով գնահատման ուսուցողական հիմքի ապահովումը կօգնի նաև ձևավորել սովորողների քննադատական մտածողությունը, կնպաստի ոչ միայն գիտելիքների բացերը բացահայտելուն, այլև միաժամանակ դրանք վերացնելուն: Ես հաճախ յուրաքանչյուր թեմայի ավարտին <<Quizizz>> ծրագրով թեստեր եմ ստեղծում և ուղարկում աշակերտներին, յուրաքանչյուր թեստի համար տալով մի քանի անգամ փորձելու հնարավորություն՝ սովորողներին ընձեռելով իրենց գիտելիքները չափելու, ինչպես նաև ինքնուրույն սովորելու հնարավորություն:Իսկ նոր ուսումնական տարում հնարավորություն կտամ ինքնագնահատում կամ թիմային գնահատում իրականացնել, օբյեկտիվ գնահատելու համար: Մյուս կողմից որպեսզի գնահատումը լինի կառուցողական և մղի գործողության՝ կիրառել սենդվիչի մեթոդը և հետադարձ կապ տալ: Որևէ թեմա անցնելիս՝ նշել դրական փաստերը/հացը/, թե ինչն է լավ ստացվել/ կարագը/, ինչ որ դրական

[10] Куприна О.Г. Функции контроля при обучении иностранному языку в вузе на платформе Moodle. Современные технологии в науке и образовании. СТНО-2018. Международный научно-технический форум. Сборник трудов. Том 9. Рязань. Book Jet. 2018, с. 108.

կողմ/պանիրը/, ինչը լավ չի ստացվել/լոլիկը/, հստակեցնել վատ կողմը/թթուն/, ուրվագծել այն քայլերը,որ պետք է կատարել աշխատանքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով սույն հետազոտական աշխատանքը՝ հանգել եմ հետևյալ եզրակացություններին.

1. Սովորողների շրջանում գիտելիքի և կարողությունների կարևորման խնդրի լուծման հրատապությունը ներկայումս բխում է հանրակրթության բնագավառում շարունակ իրականացվող արմատական փոփոխություններով, իսկ այդ առումով հատկապես խոցելի է գնահատման համակարգը:
2. Կարողունակությունների վրա հիմնված կրթության ապահովման համար կրթական գործընթացում գիտելիքի և կարողությունների կարևորումը ներկայումս հանրակրթության առաջնահերթություններից է, քանի որ գնահատման համակարգի չափորոշչային վերջին փոփոխությունները թույլ են տալիս վերանայել գիտելիքի արժևորման հիմնախնդիրը:
3. Սովորողների շրջանում գիտելիքի և կարողությունների կարևորումն արտահայտվեց ոչ թե հանուն գնահատականի, այլ հանուն գիտելիքի սովորելու չափորոշչային պահանջով:
4. Սովորողների շրջանում անհրաժեշտ է տարբեր խախուսական միջոցներով արմատավորել գիտելիքի ու կարողությունների արժևորում ոչ թե որպես գնահատման կարևոր նախապայման, այլ յուրաքանչյուր առաջընթացի արձանագրման միջոց: Արդյունքում՝ գիտելիքն ու կարողությունները աշակերտների շրջանում կարժևորվեն, իսկ գնահատականը կընկալվի ոչ թե որպես պատժող, այլ խթանող գործիք: Նշված խնդրի լուծման ուղի կարող է լինել գնահատման այնպիսի խթանիչ գործիքակազմի մշակումը, որով հնարավոր կլինի նպաստել գնահատականի խթանող և խրախուսող դերի բարձրացմանը սովորողների շրջանում:
5. Գնահատման գիտելիքահենք և կարողունակությունների կարևորմանն ու արժևորմանն ուղղված կրթական այլ արդյունավետ խթանիչ գործիքակազմի մշակման հարցում, կարծում ենք, օգտակար կարող են

լինել ուսուցիչների շրջանում հարցումները, հարցման արդյունքների վերլուծությունը և քննարկումը, ծնողների հետ զրույցը, մանկավարժների միջև փորձի փոխանակումը, ինչպես նաև՝ միջազգային առաջավոր ու հաջողված փորձի ուսումնասիրումը և ներդրումը:

Առաջարկություններ

Հաշվի առնելով թեմայի ուսումնասիրության արդյունքները՝ առաջարկում եմ.

- ✔ Հանրակրթության համակարգում որպես որակի ապահովման կարևոր նախապայման չափորոշիչներում դիտարկել սովորողների շրջանում գիտելիքի և կարողությունների կարևորումը գնահատականից և սահմանել դրա իրականացման համապատասխան գործիքակազմ:
- ✔ Կազմակերպել լայն հանրային և մասնագիտական քննարկումներ գիտելիքի արժևորման նոր մոտեցման ներդրումից առաջ՝ ընդգրկելով կրթության ոլորտի փորձագետների, ուսուցիչների, կրթության կազմակերպիչների, կրթության ոլորտում շահագրգիռ կազմակերպությունների:
- ✔ Գնահատման համակարգի ներդրման գործում կարևորել գիտելիքի՝ ձեռքբերումը որպես շարունակական և կյանքի հմտություններ ուսուցանող գործընթացի արժևորումը՝ հաշվի առնելով գնահատման համակարգի սկզբունքները և կատարելագործման հնարավորությունները:
- ✔ Կատարել սովորողների շրջանում գիտելիքը և կարողությունները գնահատականից կարևորելուն և այդ հարցում ուսուցիչներին ու սովորողներին մոտիվացնելուն միտված փորձաքննություն Երևանի ու երկու մարզերի դպրոցներում, որից հետո լրամշակել և նոր ներդնել հանրակրթության համակարգում:
- ✔ Խթանել գիտելիքի ձեռք բերման ճանապարհին սովորողների հետազոտական գործունեությունը՝ որպես ստացված գիտելիքները կարողությունների վերածելու հնարավորություն:
- ✔ Վերջին առաջարկությունից բխում է առարկայի դասավանդման գործնական ուղղվածության ուժեղացումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դպրոցներում գնահատման համակարգը և առարկաների ընտրության կարգը փոխվում է. կառավարությունը որոշում ընդունեց, https://iravaban.net/316552.html
2. Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում, http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Research-on-Quality-of-education01.08.2017.pdf, 26 էջ:
3. Հովհաննիսյան Հ., Խնդիրներ գիտելիքների գնահատման համակարգում https://www.hamakarg.am/?p=5436
4. Սովորել ոչ թե հանուն գնահատականի, այլ՝ գիտելիքի. ի՞նչ փոփոխություններ են առաջարկվում կրթության չափորոշիչներում, https://factor.am/264954.html © factor.am
5. Куприна О.Г. Функции контроля при обучении иностранному языку в вузе на платформе Moodle. Современные технологии в науке и образовании. СТНО-2018. Международный научно-технический форум. Сборник трудов. Том 9. Рязань. Book Jet. 2018.